ՏԵՂԵԿԱՆՔ
ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

~~Հոդված 14. Ոստիկանության պարտականությունները զենքի պահպանման և օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս~~

~~Ոստիկանությունը պարտավոր է՝~~

~~1) օրենքով սահմանված կարգով լիցենզիա տալ քաղաքացիական և ծառայողական զենք ու դրա փամփուշտներ ձեռք բերելու, առևտրի, հավաքածուներ կազմելու և հավաքածուներ ցուցադրելու համար, քաղաքացիական և ծառայողական զենք պահելու, պահելու և կրելու, օգտագործելու, նշված զենքն ու փամփուշտները ներկրելու կամ արտահանելու, ինչպես նաև ոստիկանությունից ժամանակավոր օգտագործման համար ստացված մարտական հրաձգային զենքերի առանձին տեսակներն ու մոդելներն օգտագործելու թույլտվություններ.~~

~~2) վերահսկել քաղաքացիական և ծառայողական զենքի, դրա փամփուշտների, ինչպես նաև արդյունաբերական կիրառման պայթուցիկ նյութերի շրջանառության՝ օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանումը:~~

~~*(14-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-123-Ն)*~~

Հոդված 14. Ոստիկանության պարտականությունները զենքի պահպանման և օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս

1. Ոստիկանությունը պարտավոր է օրենքով սահմանված կարգով տրամադրել՝

1) Քաղաքացիական և ծառայողական զենքի առեւտրի, ինչպես նաև հրաձգարանի գործարկման լիցենզիաները.

2) Զենք ձեռք բերելու, պահելու, կրելու, պահելու և կրելու, պահելու և օգտագործելու, զենքի հավաքածու կազմելու և դրանք ցուցադրելու թույլտվությունները:

3) ոստիկանությունից ժամանակավոր օգտագործման համար ստացված մարտական հրաձգային զենքերի առանձին տեսակներն ու մոդելներն օգտագործելու թույլտվություններ

2. Ոստիկանությունը պարտավոր է վերահսկել քաղաքացիական և ծառայողական զենքի, դրա փամփուշտների, ինչպես նաև արդյունաբերական կիրառման պայթուցիկ նյութերի շրջանառության՝ օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանումը:»: